

ԾՐԱԳԻՐ

«ԼԱՆԴՇԱՖՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» ԱՌԱՐԿԱՅԻ

Հեղինակ՝ Մկրտչյան Գագիկ Պարույրի, աշխարհագրական գիտությունների թեկնածու, ՄԿՈՒԶԱԿ-ի ուսումնամեթոդական բաժնի մասնագետ

Ծրագիրը քննարկված և ուսումնական գործընթացում ներդնելու համար երաշխավորված է ՀՀ ԿԳՆ ՄԿՈՒԶԱԿ-ի ուսումնամեթոդական բաժնի կողմից

Առարկայի երաշխավորվող թեմատիկ պլան

	Թեմաների անվանումը	Երաշխավորվող ժամաքանակը		
		Ընդամենը	որից	
			տեսական	գործնական
1	«Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ» դասընթացի ուսումնասիրության առարկան, նպատակը և խնդիրները	2	2	
2	Լանդշաֆտագիտական և էկոլոգիական հետազոտությունների մեթոդները	4	2	2
3	Աշխարհագրական թաղանթ և աշխարհագրական միջավայր	6	4	2
4	Աշխարհի բնական ռեսուրսները	2	2	
5	Բնության և հասարակության փոխհարաբերությունները	4	2	2
6	Աշխարհագրական թաղանթի օգտագործումն ու աղտոտումը	8	6	2
7	Համաշխարհային բնապահպանական ռազմավարությունը	4	2	2
8	Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները	4	2	2
	Դասընթացի ամփոփում և կրկնություն	2		
	Ընդամենը	36	22	12

Բ Ա Յ Ա Տ Ր Ա Գ Ի Ր

«Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ» դասընթացի առարկայական ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով 2004 թ.-ի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի» հիմնադրույթներն ու հոդվածները, մասնավորապես, ազգային միջոցառումներին վերաբերող 2-րդ գլխի հատուկ միջոցառումներին միտված 6-րդ հոդվածի ուսուցմանը և կրթությանը նվիրված «Բ» կետի «գ» ենթակետի պահանջները, այն է՝ հանրակրթական, մասնագիտական ու համալսարանական այնպիսի դասընթացների նախապատրաստումը, որոնք համապատասխան առարկաներում կբացահայտեն լանդշաֆտների արժեքը և հիմնախնդիրները՝ կապված դրանց պահպանության, կառավարման ու պլանավորման հետ:

Բացի վերոգրյալից, ուղղորդող առաջնահերթություն է դիտվել «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայից» բխող Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 308-Ն որոշմամբ հաստատված 2011-2012 թվականների միջոցառումների ցանկի հավելվածում ներգրավված պարտավորությունների կատարման 5-րդ կետով նախատեսված գործընթացը, այն է՝ Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայով սահմանված ուսուցմանն ու կրթությանն առնչվող սկզբունքների ներառումը:

Նկատի ունենալով հասարակության կարիքների, տնտեսական գործունեության ձևերի և շրջակա միջավայրի միջև համաչափ ու ներդաշնակ հարաբերությունների հենքի վրա կայուն զարգացման անբեկանելիությունը և դրանում լանդշաֆտի դերի կարևորությունը, նպատակահարմար է համարվում նախնական մասնագիտական (արհեստագործական) ու միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում «Էկոլոգիայի հիմունքներ» դասընթացը հարստացնել լանդշաֆտագիտության ու լանդշաֆտային քաղաքականության հիմնադրույթներով՝ կազմավորելով նոր բովանդակությամբ և կառուցվածքով դասընթաց, այն է՝ «Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ»:

Ծրագրի վերաբերյալ առաջարկությունները և դիտողություններն խնդրում ենք ուղարկել հետևյալ հասցեով. Երևան, Տիգրան Մեծի պող., 67, ԿԱԻ, ՄԿՈՒԶԱԿ

Թեմա I - «Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ» դասընթացի ուսումնասիրության առարկան, նպատակը և խնդիրները

Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի ձևավորումը, որպես ինքնուրույն գիտական ճյուղեր: Դրանց համար ընդհանուր ուսումնասիրության օբյեկտները և տարածքային կառուցվածքային միավորները, նպատակներն ու խնդիրները: Համամոլորակային (գլոբալ), տարածաշրջանային (ռեգիոնալ) ու տեղական (լոկալ) մակարդակներում բնական և հասարակական օբյեկտների ու երևույթների փոփոխության և զարգացման տարածական անհամասեռությունը՝ լանդշաֆտագիտության ու էկոլոգիայի համատեքստում: Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի միջև փոխադարձ կապերն ու միասնացումը (ինտեգրումը) բնական և հասարակական գիտությունների մյուս ճյուղերին:

Թեմա II – Լանդշաֆտագիտական և էկոլոգիական հետազոտությունների մեթոդները

Դաշտային հետազոտության մեթոդներ (օբյեկտների ու երևույթների անմիջական հետազոտությունները. էքսպեդիցիաներ, ստացիոնար դիտարկումներ, կամերալ մշակումներ): Քարտեզագրական մեթոդներ (քարտեզների ընթերցում, երկարությունների, անկյունների և մակերեսների չափագրում, տեղագրական քարտեզներում տեղանքի պատկերման առանձնահատկությունների վերծանում ու համապատասխան գործնական աշխատանքների կատարում, մարդու առօրյա գործունեության համար քարտեզների դերի և նշանակության գնահատում): Պատմական, համեմատական-աշխարհագրական և վիճակագրական մեթոդներ:

Թեմա III - Աշխարհագրական թաղանթի և աշխարհագրական միջավայր

«Աշխարհագրական թաղանթ» և «աշխարհագրական միջավայր» եզրույթների սահմանումը: Աշխարհագրական թաղանթի զարգացման փուլերը. երկրաբանական փուլ (երկրակեղևի, մթնոլորտի, ջրոլորտի առաջացումն ու զարգացումը), կենսաբանական փուլ (օրգանիզմների զարգացումը, դրանց ազդեցությունն աշխարհագրական թաղանթի մյուս ոլորտների բաղադրիչների զարգացման վրա), մարդածին փուլ (մարդու առաջացումը և գործունեությունն աշխարհագրական թաղանթում, երկրագնդի բնակեցումն ու յուրացումը մարդու կողմից, մարդկային քաղաքակրթությունների զարգացումը):

Աշխարհագրական թաղանթի ոլորտները. քարոլորտ, մթնոլորտ, ջրոլորտ, կենսոլորտ: Դրանց ֆիզիկաքիմիական հատկությունները, ուղղաձիգ և հորիզոնական (տարածական) կառուցվածքները, յուրահատուկ գործընթացներն ու երևույթները: Աշխարհագրական թաղանթի ոլորտների փոխկապվածությունը և փոխազդեցությունը:

Աշխարհագրական թաղանթի հիմնական հատկանիշները, ամբողջականությունը, կառուցվածքայնությունը, ռիթմայնությունը, գոտիականությունը: Աշխարհագրական գոտիները և բնական զոնաները, որպես բնատարածքային համալիրներ (ԲՏՀ): Ազոնալ ԲՏՀ-ներ: Նյութերի, օդի, ջրի, օրգանիզմների և էներգիայի շրջապտույտն աշխարհագրական թաղանթում: Աշխարհագրական թաղանթում ընթացող երևույթների էներգետիկ աղբյուրները. արեգակնային և երկրագնդի ներքին ջերմային էներգիա:

Թեմա IV - Աշխարհի բնական ռեսուրսները

Բնական ռեսուրսները, դրանց տեսակները և տնտեսական գնահատումը: Ռեսուրսաապահովվածություն: Երկրագնդի ապահովվածությունը հանքային, հողային, ագրոկլիմայական, ցամաքի ջրային, Համաշխարհային օվկիանոսի, կենսաբանական, տիեզերական, ռեկրեացիոն ռեսուրսներով:

Թեմա V - Բնության և հասարակության փոխհարաբերությունները

Բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը և դրա խախտման պատճառներն ու հետևանքները: Բնօգտագործումը և շրջակա միջավայրի չկանխատեսվող փոփոխությունները: Շրջակա միջավայրի մարդածին աղտոտումը: Աղտոտման աղբյուրները, տեսակները: Աշխարհագրական թաղանթի ոլորտների օգտագործման և պահպանման առանձնահատկությունները:

Թեմա VI - Աշխարհագրական թաղանթի օգտագործումն ու աղտոտումը

Քարոլորտ: Ընդերքի ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն ու պահպանումը:

Մթնոլորտ.Օդի աղտոտման աղբյուրները, տեսակները, հետևանքները և պահպանումն աղտոտումից: Օզոնի շերտի էկոլոգիական դերը: «Ջերմոցային էֆեկտի» էությունը:

Ջրոլորտ: Ջրային ռեսուրսներ: Բաշխումը երկրագնդի վրա: Ջրօգտագործման ոլորտները: Ջրային ավազանների աղտոտման աղբյուրները, տեսակները և պահպանման առանձնահատկությունները:

Կենսոլորտ: Զարգացման և ինքնավերականգնման օրինաչափությունները:

Հողային ռեսուրսների օգտագործման առանձնահատկությունները, դրանց աշխարհագրական տարբերությունները և պահպանման հիմնական միջոցառումները:

Բուսական ռեսուրսների աշխարհագրական տարածումը և դասակարգումն ըստ կիրառության բնագավառների, նրանց ռացիոնալ օգտագործումը, վերականգնումն ու պահպանումը:

Կենդանական ռեսուրսների աշխարհագրական տարածումը և դասակարգումը, ռացիոնալ օգտագործումը, վերականգնումն ու պահպանումը:

Թեմա VII -Համաշխարհային բնապահպանական ռազմավարությունը

Հասարակության հավասարակշռված (կայուն) զարգացման հայեցակարգը: Համաշխարհային բնապահպանական ռազմավարությունը: Տնտեսական աճից դեպի կայուն զարգացում: Միջազգային համագործակցությունը բնօգտագործման և բնապահպանության բնագավառում: Միջազգային համագործակցության ձևերը: Բնապահպանական կազմակերպությունները և ծրագրերը, դրանցում Հայաստանի Հանրապետության ներգրավվածությունն ու մասնակցության ակտիվությունը: ՀՀ հատուկ պահպանվող տարածքները:

Թեմա VIII-Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները

Հանքային հումքի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների սպառման, կլիմայական ռեսուրսների ու Համաշխարհային օվկիանոսի օգտագործման, կենսաբազմազանության (գենոֆոնդի) պահպանման, պարենային և աղքատության հաղթահարման հիմնախնդիրները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գաբրիելյան Հ.Կ., Հայկական լեռնաշխարհ, ուսումնական ձեռնարկ: Երևան: 2000 թ.:
2. Թախտաջյան Ա.Լ., Հայաստանի բուսական աշխարհը: Երևան: 1946 թ.:
3. Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2000 -2006. Վիճակագրական ժողովածու: Երևան: ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն. 2007 թ.:
4. Մկրտչյան Գ.Պ. և ուրիշներ: Աշխարհագրություն: Տեղեկատու աղյուսակներ, հասկացություններ, տերմիններ և խնդիրներ: Երևան:«Անտարես»,2009 թ.:
5. Մկրտչյան Գ.Պ., Խոյեցյան Ա. Վ.: Հայաստանի աշխարհագրություն: Տասներկուամյա

